ՀՈԳԵՒՈՐ ԸՆԹԵՐՑՈՒՍՈՒՄՆԵՐ

Տ. ՀԵԹՈՒՄ ՔԶՆ. ԹԱՐՎԵՐԴՅԱՆ

ՍՈՒՉԱՎԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀՐԱՇՔԸ

1512 թ. Արեւելյան Եւրոպայում՝ Դանուբի ափերին Տոնավագ անունով մի հայ վաճառական հիմնեց Սուչավայի[1] Ս. Հաճկատար վանքը: Սուչավան նշանավոր է նաեւ նրանով, որ այն Եւրոպայի միակ քաղաքն է, ուր կառուցվել են վեց հայկական եկեղեցի ու երկու վանք՝ բոլորն էլ հիմնված ԺԵ.-ԺԶ. դարերում: Այս մասին մեզ տեղեկություն է տալիս Սիմեոն դպիր Լեհացին իր նշանավոր ուղեգրության մեջ 1608 թ. «Եւ կայր յայս քաղաքս երեք-չորս հարիւր տուն հայի. երեք քարաշէն եկեղեցի եւ երկու վանք վիմաշէն քաղաքէն ի դուրս, յոյժ գեղեցիկ եւ պատուական. մինն մերձ եւ հուպ քաղաքին, միւսն երկու մղոն հեռի»[2]: Հայ մատենագրության մեջ Սուչավա քաղաքը հայտնի է Սչովա, Սոչով, Սիչով, Սուչով, Շեչով եւ համանման այլ ձեւերով: Սուչավան առանձնակի նվիրական է նաեւ նրանով, որ Լվովի եւ ընդհանրապես լեհահայ գաղութի նման համարվում է հիմնված անեցիների շառավիղների կողմից, ըստ այդմ՝ ժառանգորդն այդ մեծ մշակույթի[3]: Հայերը Մոլդովայում եւ Տրանսիլվանիայում[4] հաստատվել են ԺԳ. եւ ԺԴ. դդ.[5]:

Ահա այսպես անեցիների շառավիղների առաջին հանգրվանը ռումինամոլդովական կողմերում դառնում է Սուչավան: Շատ լավ է բնորոշում անեցիների մուտքը այս հող ռումինահայ նշանավոր պատմաբան Հակոբ Սիրունին. «Անին, Մոլդովայի մեջ, Սուչավան էր ըրեր իր առաջին կայքը»[6]:

Սուչավայի մասին հայ մատենագրության մեջ առաջին հիշատակությունը գտնում ենք ԺԳ. դարի նշանավոր պատմիչ Վարդան Արեւելցու «Աշխարհացոյցում», ուր ասվում է. «Եւ ի վերայ Լօվայ եւ Սէչովայ գայ հասանէ մինչ ի Կոս-

1 Մոլդովայի հյուսիսային մասը կոչվում է Բուկովինա՝ Սուչավա կենտրոնով, որը մինչեւ ԺԵ. դարի կեսին Մոլդովայի մայրաքաղաքն էր:

2 «Սիմէոն դպրի Լեհացւոյ Ուղեգրութիւն, Տարեգրութիւն եւ Յիշատակարանք», աշխատ.՝ Հ. Ն. Ակինեան, Վիեննա, 1934, էջ 4:

3 Տե՛ս «Աբրահամ Կաթողիկոսի Կրեպացւոյ Պատմագրութիւն», Վաղարշապատ, 1872, էջ 109. նաեւ՝ «Դիւան հայոց պատմութեան», աշխատ.՝ Գիւտ աւ. քհն. Աղանեանցի, գիրք Թ., Թիֆլիս, 1911, էջ 489-490:

4 Տե՛ս **Դանիէլիս Տանի**, Արեւելեան Հայք ի Պուքովինա, թրգմ.՝ Հ. Գ. Գալեմքեարյան, Վիեննա, 1891, էջ 75:

5 Տե՛ս **Վազգեն Ծ. վրդ. Պալճյան**, Ռումանահայ թեմը երեկ եւ այսօր. «Էջմիածին», 1948, Ա., էջ 66:

6 **Հ. Ճ. Սիրունի**, Հայ Եկեղեցին ռումեն հողի վրայ, Նիկոլա Յորգա, Ս. Էջմիածին, 1966, էջ 97:

փանդնուպօլիս»[7]: Իսկ Սուչավայի հայ համայնքի մասին առաջին ուղղակի հիշատակությունը գտնում ենք Թեոդորոս Ռ. Կիլիկեցու 1388 թ. գրած կոնդակում, ուր ասվում է. «Յականաւոր թագաւորանիստ քրիստոսական մայրաքաղաքն ի Լովն եւ յամենայն վիճակն իւր բոլորովին. ի Սերաթն, ի Չիչովն, ի Կամենեցն, ի Լուցկայն...»[8]: Ինչպես տեսնում ենք, այստեղ որպես Արեւելյան Եւրոպայի մի շարք երկրների ու քաղաքների թեմական կենտրոն հիշվում է Լվովը, իսկ այս թեմին մաս կազմող եւ տարբեր երկրներ ու բնակավայրեր ընդգրկող վիճակներից առաջինը հիշվում է Չիչովն՝ Սուչավան:

Մոլդովայի իշխանապետ Ալեքսանդր Բարին 1401 թ. Սուչավայում գրված հրովարտակով թույլ է տալիս հիմնելու մոլդովառումինական կողմերի առանձին թեմական կառույց, որի առաջնորդանիստ կենտրոնն է դառնում Սուչավան[9]: Հաճկատարից բացի, Սուչավայում հայերը հիմնում են նաեւ Զամկայի կամ Ս. Օգսենտրի վանքը, իսկ քաղաքում որպես եկեղեցիներ՝ Ս. Խաչը, Ս. Սիմեոնը, Ս. Աստվածածինը եւ Ս. Նիկողայոսը: Սուչավայի հայ համայնքի այս բացառիկությունը պայմանավորված է եղել նաեւ առեւտրական կապերով ու Սուչավայի բարենպաստ դիրքով: Այստեղով էին անցնում մերձվոլգյան շրջաններից Դանուբի ընթացքով շարժվող հայ վաճառականների քարավանները, որոնք պատմության մեջ հայտնի են Կարելե արմենեշտա՝ «հայկական կառքեր կամ սայլեր» անվանմամբ:

Ալեքսանդր Բարին, 1401 թ. իր հրովարտակով իրավունք տալով հիմնելու Սուչավայի թեմը[10], այնուհետեւ 1408 թ. հոկտեմբերի ութի հրովարտակով Լվովից հրավիրում է հայ վաճառականների եւ բնակեցնում Սուչավա, Սիրետ եւ Չեռնովիցի քաղաքներում: 1418 թ. Լեհաստանից հրավիրվում են եւս 3000 հայ ընտանիք, որոնցից 700-ը Սուչավայում են բնակվում: Հայ համայնքն ունեցել է իր քաղաքային վարչությունը՝ քաղաքապետով եւ 12 հոգուց բաղկացած ավագների խորհրդով, ինչպես նաեւ հայերին վերաբերող գործերը քննող հայ դատավորով: Սուչավայի մի շարք փողոցներ հայկական անվանումներ ունեն, իսկ կենտրոնական փողոցներից մեկը կոչվում է Արմենասկը՝ Հայկական փողոց: Սուչավայում պահպանվել են տեղի հայերի մի շարք տներ, հյուրանոցներ, խանութներ եւ մի շարք այլ շինություններ: Հայկական ծաղկուն կյանքով ապրող Սուչավայում 1629 թ. սպասավորել են 11 հոգեւորական: Նրանց անունները թվարկվում են նույն 1629 թ. Հաճկատարում գրված մի ձեռագրի հիշատակարանում[11]:

Ինչպես նշվեց, Սուչավայում, բացի Հաճկատարի Ս. Աստվածածին եկեղեցուց կառուցվել է Զամկան, որը ԺԵ. դարում եղել է տեղի հայոց հոգեւոր առաջ-

7 **Վարդան Վարդապետ**, Աշխարհացոյց, քնն. բնագիրը՝Հ. Պէրպեանի, Բարիզ, 1960, էջ 75:

8 **Ն. Ղ. Ալիշան**, Կամէնից, Վենետիկ, 1896, էջ 9:

9 Տե՛ս **Ս. Գօլանճեան**, Ռումինահայութեան Անին՝ Սուչաւայի հայ գաղութը, Երեւան, 2000, էջ 25:

10 Տե՛ս **Վազգեն Ծ. վրդ. Պալճյան**, Ռումանահայ թեմը երեկ եւ այսօր, էջ 66:

11 Տե՛ս **Վ. Նակորյան**, Հայերեն ձեռագրերի ԺԷ. դարի հիշատակարաններ, հտ. Բ., Երեւան, էջ 360-361:

նորդական կենտրոնը: Անվանվում է նաեւ Ս. Օգսենտ՝ նվիրված լինելով այս սրբի հիշատակին: Ջամկայի մասին լեհ պատմաբան Լ. Ծիմանսքին գրում է. «Ջամքան, անկասկած հանդիսանում է Սուչաւայի հայերի կառուցած ամենակարեւոր հոգեւոր յուշարձանը՝ գերազանցելով մնացեալ բոլորին ինչպէս իր մեծութեամբ, այնպէս եւ իր արուեստով: Գտնուելով Սուչաւայի արեւմտեան ծայրամասի՝ Արենի կոչուած բարձրավանդակում, նա ստացաւ լեհական Ջամէք կամ յոգնակի՝ Ջամքի անունը, որը լեհերէն նշանակում է բերդ, ամրութիւն կամ ամրոց»[12]: Ջամկայի մասին, որպես թեմական առաջնորդանիստ կենտրոնի, առաջին հիշատակությունը գտնում ենք 1415 թ. ներքո, որպես առաջնորդ հիշվում է Ավետիք անունով մի եպիսկոպոս[13]:

1445 թ. Գրիգոր Ժ. Ջալալբեկյանց Կաթողիկոսը (1443-1465) Ավետիք եպիսկոպոսին վերահաստատում է առաջնորդական այս պաշտոնում՝ որպես եպիսկոպոս «Պուղտանայ հայոց», թեմական կենտրոն սահմանելով Սուչավան[14]: Ջամկայի վանքը կազմված է երեք կառույցից. առաջին՝ Ջանգակատուն աշտարակ, որի ստորին մասից բացվում է դեպի վանքը տանող մուտքը՝ պատմական դարպասով: Աշտարակի երկրորդ հարկում Ս. Գրիգոր Լուսավորիչ մատուռն է, իսկ դրա վերեւում՝ զանգակատունը: Երկրորդ՝ վանքի Ս. Օգսենտ եկեղեցին, որն ունի նախագավիթ, գավիթ եւ խորան: Եկեղեցին ունի երկու մուտք, մեկը՝ գավթի հյուսիսային կողմից, իսկ մյուսը՝ նախագավթի արեւմտյան կողմից: Երրորդ՝ Վանատուն առաջնորդարանը, որի երկրորդ հարկում գտնվում է Ս. Աստվածածնին նվիրված մատուռը, իսկ դրա վերեւում պաշտպանական մի կառույց է վանքի պարիսպների ընդհանուր համակարգում: Վանքի պարիսպը, ինչպես գրում է ԺԷ. դարի մատենագիր Գրիգոր Դարանաղցին, կառուցվել է նույն դարի քսանական թվականներին[15]: Այն կառուցել է 1624-1631 թթ. Մոլդովայի հայոց թեմի առաջնորդ Ղազար վրդ. Բաբերդացին, որը ճանաչված մատենագիր էր, ինչպես նաեւ մանրանկարիչ եւ ձեռագրեր ընդօրինակող: Վանքի պարիսպների արեւելյան անկյունային մասում դեռ երեւում են միաբանական կացարանների ավերակները, որոնք խնամքով պահպանվում են: Անհրաժեշտ է նշել, որ Ջամկան նախորդ տասնամյակներին նորոգվել է ռումինական իշխանությունների կողմից, այնպես, որ հստակորեն երեւում է, թե պարսպի շարվածքի որ մասն է պատմական շերտը ներկայացնում եւ որ մասը՝ նորոգությամբ ավելացվածը: Ջամկայի ներսի որմնանկարների թեմատիկ շարքն ընդգրկում է ողջ Տերունական պատկերաշարը: Այս որմնանկարների կատարման տեխնիկան ռումինացի մասնագետները բնորոշ են համարում ԺԵ.-ԺԷ. դարերի ռումինական արվեստին, որն ունեցել է կավճյա սվաղ: Վերջինիս վրա գույները միաժամանակ թե՛ խամրած

12 **Ս. Գօլանճեան**, նշվ. աշխ., էջ 87:

13 Տե՛ս **Ն. Միրուսի**, Հայ եկեղեցին ռումեն հողի վրայ, էջ 15. նաեւ՝ **B. P. Hajdeu,** Istoria tolerantei religioase Bucuresti, 1968, էջ 67:

14 Տե՛ս **Ն. Ղ. Ալիշան**, Կամէնից, էջ 134:

15 Տե՛ս **Գրիգոր Դարանաղցի**, Ժամանակագրութիւն, Երուսաղէմ, 1915, էջ 409:

են թվում եւ թե՛ ներքին մի պայծառություն ունեն: Որմնանկարների այս շարքից, ցավոք, առանձին բեկորներ են պահպանվել, որոնք, այնուամենայնիվ, հիացնում են իրենց արտահայտչականությամբ:

Ավագ խորանի առջեւ է գտնվում եկեղեցու հիմնադրի գերեզմանը, որն ունի հետեւյալ արձանագրությունը. «Այս է տապան Ակոբշային, որ է որդին Ամիրային, սա է շինող Սուրբ տաճարին, հանգեաւ հայոց Ռ. (1551) թուին ԿԱ. (61) էր աւելին»[16]: Պայմանավորված այն հանգամանքով, որ Զամկայի վանական համալիրն ունի երեք կառույց, ավանդությամբ ասվում է, թե այս վանքը կառուցել են երեք եղբայր: Նրանցից Հակոբը կառուցել է Ս. Հակոբի մատուռը, Օգսենտը՝ Ս. Օգսենտի եկեղեցին, իսկ Գրիգորը՝ Ս. Գրիգոր Լուսավորչի մատուռը[17]: Վերը բերված վիմական արձանագրությունում որպես վանքի հիմնադիր հիշվում է Յակոբշան: Երեք եղբայրներից առաջինի համար ասվում է, թե նրա անունը Հակոբ է եւ կառուցել է Ս. Հակոբին նվիրված մատուռը: Այդպիսի մատուռ հիմա վանքում չկա: Կարելի է ենթադրել, որ սկզբնապես այդպես է կոչվել Տիրամորը նվիրված մատուռը, կամ վանքի շինությունում նախկինում եղել է նման մատուռ: Սուչավայում նշանավոր հայկական եկեղեցիներից է նաեւ Ս. Խաչը: Այս եկեղեցում պահպանվել են ռումինահայ գաղութից մեզ հասած հնագույն երկու տապանաքարերը, որոնցից առաջինը 1428 թվականից է եւ ունի հետեւյալ արձանագրությունը. «Այս է տապան Էփիլպէյին, որ է որդի Սողոմոնին: Հանգեաւ թուին հազար ՆԻԸ. (1428) ապրիլ ամսոյ ԺԴ.-ին»[18]: Հաջորդ տապանաքարը՝ թվագրված 1447 թվականով, կարեւորվում է նրանով, որ պատկանում է մի քահանայի. սա ցույց է տալիս, որ նվազագույնը այդ ժամանակ Սուչավայում եղել է գործող հայկական եկեղեցի: Այս արձանագրությունում ասվում է. «Սա է տապան Էսայի երիցու: Թվ. ՉԻՉ. (1447)»: Սկզբնապես փայտաշեն այս եկեղեցին վերստին քարաշեն կառուցվում է 1521 թ. Շտեֆանիցա վոյեվոդայի օրոք՝ Խաչիկ Հանգոյի կողմից[19]: Ս. Խաչն այսօր եւս գործող եկեղեցի է: Եկեղեցու գավթում են գտնվում մի շարք սրբանկարներ, այդ թվում՝ Ս. Սարգսի (1828 թ.): Այստեղ են բերվել նաեւ Սուչավայի Ս. Սիմեոն հայոց եկեղեցու Ավագ խորանի «Տիրամոր Թագադրումը» (1811 թ.), ինչպես նաեւ Բաքաու քաղաքի հայոց եկեղեցու բեմանկարների (իկոնոստասի) Տերունական պատկերաշարը, փայտյա ոսկեզօծ շրջանակներով պատկերները: Ս. Խաչը եւս ունի շքեղ մի իկոնոստաս՝ ստեղծված ԺԹ. դարի առաջին կեսին:

Եկեղեցուն կից գտնվող թանգարանում կան ԺԸ. դարավերջի եւ ԺԹ. դարի մի շարք սրբանկարներ, ինչպես նաեւ արխիվային բնույթի նյութեր: Սուչավա քաղաքի հայկական երկրորդ եկեղեցին է Ս. Սիմեոնը, որը զանգակատան կարմիր գույնի համար անվանվում է նաեւ Կարմիր աշտարակ (Turnul Rosu): Այս

16 **Ն. Ճ. Սիրունի**, նշվ. աշխ., էջ 103:
17 Տե՛ս **Ն. Գալփագեան**, Ռումինահայ գաղութը, Երուսաղէմ, 1979, էջ 63:
18 **Ն. Ճ. Սիրունի**, նշվ. աշխ., էջ 99:
19 Տե՛ս անդ, էջ 109:

եկեղեցու մասին Մինաս Բժշկյանը գրում է. «Սուրբ Սիմէոն է քարաշէն եւ գեղեցիկ եկեղեցի կառուցեալ ի ծայր թաղին հայոց»[20]: Եկեղեցու կառուցման թվականը հայտնի չէ, սակայն, որպես վերակառուցման թվական նշում է 1606 թ., հետեւաբար այն կառուցվել է դրանից շատ ավելի վաղ[21]: Այս եկեղեցում սակայն պահպանվել է մի տապանաքար, որն ունի հետեւյալ արձանագրությունը. «Այս է տապան Տէր Օհաննէսին աւաքերէց կանուանէին, որ է որդին Դր. Կաւնիկին եկեղեցի շինօղին, որ կանուանէ սուրբ Սիմէոն: Հանգեաւ թվ. ՌԿԸ.-ին մարտի ամսոյն ԻԲ.-ին հետ գալստեանն Ծաղկազարդին»: Համաձայն այս արձանագրության՝ այս տապանաքարը պատկանում է Ս. Սիմեոն եկեղեցու ավագերեց Տեր Հովհաննեսին, որ որդին էր այս եկեղեցու կառուցող պրն. Տոնիկի: Տեր Հովհաննեսը, ինչպես ասվում է, վախճանվել է 1619 թ., հետեւաբար նրա հայրը այս եկեղեցին կարող էր կառուցած լինել 1606 թ. տարիներ առաջ:

Եկեղեցուն կից Սուչավայի հին հայկական գերեզմանոցն է՝ ԺԷ. դարից պահպանված հայկական արձանագրություններով: Սուչավայի մյուս երեք հայկական եկեղեցիները չեն պահպանվել, եւ միայն գրավոր հիշատակություններ են մնացել դրանց մասին: Դրանցից առաջինը Ս. Աստվածածին եկեղեցին է, որը տարբեր է Հաճկատարի վանքի նույնանուն եկեղեցուց: Այս եկեղեցին հիշվում է դեռեւս 1504-1506 թթ. Սուչավայում գրված մի «Ճաշոցում», ուր ասվում է, որ այն գրվել է՝ «...ի քաղաքս, որ կոչի Սէչով, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնին եւ առ դրան կենսակիր Սուրբ Խաչին»[22]: Ինչպես տեսնում ենք, այստեղ հիշվում է նաեւ Սուչավայի Ս. Խաչ եկեղեցին: Սուչավա քաղաքում եղած այս եկեղեցու մասին հստակորեն գրում է նաեւ Մինաս Թոխատեցին իր նշանավոր «Ողբ ի վերայ Օլախաց երկրի հայերուն» գործում[23]: Սուչավայում հիշվող, սակայն այժմ չպահպանված հաջորդ երկու եկեղեցիներն են Ս. Երրորդությունը եւ Ս. Նիկողայոսը: Նրանցից առաջինը գտնվել է քաղաքի կենտրոնում, ուր 1646 թ. մարտի 14-ին Անտոն Սերերգոյենց եպիսկոպոսը քահանա է ձեռնադրել Տեր Սիմեոնի որդի Խաչատուրին[24]: Երբ 1830 թ. Մինաս Բժշկյանը Սուչավա է գալիս, տեսնում է այս եւ Ս. Նիկողայոս եկեղեցիների ավերակները միայն, որի մասին գրում է. «...տեսաք զտեղիս եկեղեցեաց Սրբոյ Երրորդութեան եւ Սրբոյն Նիկողայոսի, այլ այժմ քանդեալ են, միայն մնացեալ են երկու եկեղեցիք եւ երկու վանքայք»[25]: Անհրաժեշտ է նշել, որ Սուչավան Ռումինիայի հայաշատ մյուս քաղաքների նման ունեցել է նաեւ հայկական գերեզմանոց, ուր 1902 թ. կառուցվել է Ս. Հարություն մատուռը:

Սուչավայի հայկական եւ ոչ միայն հայկական եկեղեցիներից ու վանքերից ամենահռչակավորը Հաճկատարն է, որն անվանվել է Եւրոպայի մուրազատու

20 **Մինաս Բժշկեան**, Ճանապարհորդութիւն ի Լեհաստան, Վենետիկ, 1830, էջ 192:
21 Տե՛ս **Ն. Ճ. Միրունի**, նշվ. աշխ., էջ 111:
22 **Ն. Յ. Տաշեան**, Ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, 1895, էջ 55:
23 Տե՛ս «Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը», հտ. Ա., աշխտ.՝Հ. Սահակյանի, Երեւան, 1986, էջ 427:
24 Տե՛ս **Ն. Յ. Տաշեան**, Ցուցակ հայերէն ձեռագրաց, էջ 775:
25 **Մինաս Բժշկեան**, նշվ. աշխ., էջ 191:

Սուրբ Կարապետ[26]: Հաճկատարի վանքի այս հռչակը լավագույնս արտահայտվել է հենց նրան տրված «հաճկատար» բնորոշման մեջ: Հաճկատար բառը, որպես վանքին տրված առաջին բնորոշում, գտնում ենք Կիլիկյան Հայաստանի Արքակաղնի անվանվող վանքում: Ինչպես գրում է Հ. Ղեւոնդ Ալիշանը. «Կոչէր մենաստանս այս եւ Խճկտոր, թուի Հաճկատար, յորմէ զուշակի եւ եկեղեցւոյն նուիրեալ զոյ Ս. Աստուածածնի, զի սովորաբար Տիրամօր ընծայի մակդիրն Հաճկատար»[27]: Ինչպես տեսանք, Արքակաղնի վանքին տրված Հաճկատար անվանումն ավելի շատ Ալիշանի բնորոշումն է: Իրականում այն անվանվել է «Խճկտոր»: Ալիշանի իսկ բերած վկայակոչման մեջ ասվում է, որ երբ 1203 թ. վախճանվում է Գրիգոր Զ. Ապիրատ Կաթողիկոսը, թաղվում է այս վանքում. «Դնի ի Սուրբ Խճկտոր, զոր ուխտն Արքակաղանին կոչեն»[28]: Խճկտորը թերեւս կարող է լինել նաեւ Խաչկատար բառի ժողովրդա-բարբառային ձեւը: Այսպիսով, Հաճկատար, Խնդրակատար բառերը նույն իմաստը, խորհուրդն ու գործառույթն ունեն:

Սուչավայում 1512 թ. հիմնված Ս. Աստվածածին վանքին տրված անվանումը, որ առաջին հերթին Հաճկատար է եղել, հիմնավորվում է այն հանգամանքով, որ այս վանքը Ռումինիայում ժառանգորդն է ընկալվել Լվովի Ս. Աստվածածին հայոց վանքի, որը եւս Հաճկատար է անվանվել:

Ինչպես ասացինք, Սուչավան սկզբնապես հոգեւոր մի հովվության վիճակ էր Լվովի թեմի կազմում եւ հետո է դառնում առանձին թեմ, եւ նույն Սուչավայում հաստատված հայերի մի զգալի մասը եկել էր հենց Ուկրաինայից ու Լեհաստանից՝ իրենց հետ բերելով հիշողությունը Լվովի Հաճկատար անվանվող վանքի: Այս երկու վանական հաստատություններն իրար կապող հոգեւոր ընդհանրություն էր նաեւ այն, որ երկուսն էլ համարվում էին անեցիների շառավիղների կառուցած վանքեր: Ս. Հաճկատարի վանքի հիմնադրման մասին մեզ է հասել գեղեցիկ մի ավանդություն, որը պատմվել է երկու տարբերակով: Համաձայն այս ավանդության առաջին տարբերակի՝ Սուչավայի Ս. Հաճկատար վանքի հիմնումը կապվում է Տոնավագ, ռումին ավանդությամբ՝ Դրըգան Դոնովակի անունով մի եզնավաճառի հետ, որ եզները Վիեննա վաճառքի տանելու ճանապարհին գիշերում է այն բլուրին, որի վրա այժմ Հաճկատար վանքն է: Ասվում է, որ գիշերը երազում նա տեսնում է մեղեդիներ երգող հրեշտակների ու հոգեւոր զմայլման մեջ արթնանալով՝ ուխտ անում, որ եթե գործերը հաջող ընթանան, այդ տեղում մի վանք կկառուցի[29]: Նրա գործերը Վիեննայում բավական հաջող են ընթանում, եւ համաձայն իր կատարած ուխտի՝ նա կառուցում է վանքը[30]:

Այս ավանդության երկրորդ տարբերակով ասվում է, որ Տոնավագ մակա-

26 Տե՛ս **Պետրոս քահանա Մամիկոնեան**, Ռումինահայոց ներկան եւ ապագան, Կալաց, 1895, էջ 26:

27 **Հ. Ղ. Ալիշան**, Սիսուան կամ Լեռն Մեծագործ, Վենետիկ,1885, էջ 253:

28 Անդ, էջ 253:

29 Տե՛ս **Լ. Խաչիկյան**, Հայերը հին Մոսկվայում եւ Մոսկվա տանող ճանապարհների վրա. «Բանբեր Մատենադարանի», հմ. 13, Երեւան, 1980, էջ 7-107:

30 Տե՛ս **Հ. Ճ. Միրունի**, նշվ. աշխ., էջ 107:

նունով եզնավաճառ եղբայրներ Աստվածատուրը (Բոգդան) եւ Տրականը, անցնելով այդ կողմերով, գիշերում են այն տեղում, որտեղից հիմա երեւում է Հաճկատարի եկեղեցու գմբեթը: Նրանք երկուսն էլ երազում տեսնում են, որ իրենց գործերը հաջող ընթանալով՝ եկեղեցի են կառուցել երեւացող բլրին: Առավոտյան արթնանալով՝ եղբայրները տեսնում են, որ եկեղեցու հիմքերը գցվել են, եւ նույն տարում նրանք կառուցում են այս վանքը[31]: Ի հիշատակ՝ որպես ուխտի կատարում 1512 թ. հիմնված այս վանքի, եկեղեցու գավթի ճակատի 1896 թ. արձանագրությունում ասվում է. «Ըստ հին աւանդական գրեանց ապացուցմանց հիմնեալ եղեւ հրաշագործ սուրբ տաճարս Տօնաւագ անուամբ բարեպաշտէ մը, թուականին Քրիստոսի 1512-ին եւ նորոգեցաւ արդեամբ ազգային յիշատակաց լեալ բարեպաշտից 1896 թիւն»[32]:

Հաճկատարի հիմնադրման ավանդությունը ցույց է տալիս, որ այն ոչ միայն ուխտակատար վանք է, այլեւ կատարված ուխտի՝ Տոնավագ եղբայրների տված խոստման արդյունք է: Ինչպես գրում է Սիրունին. «Հաճկատարը ուրեմն ուխտի մը պտուղն է եւ ուխտավայր մը կմնայ սերնդէ սերունդ ահա չորսուկէս դարէ ի վեր: Վանքը նուիրուած է Ս. Աստուածածնին, բայց ուխտաւորները զայն Հաճկատար կճանչնան, առանց գիտնալու նոյնիսկ բառին ստուգաբանութիւնը, առանց հետաքրքրուելու նոյնիսկ, թէ Խաչկատա՞ր կամ Հաճոյակատա՞ր եղած է անոր սկզբնական ձեւը»[33]: Այս առումով հատկանշական է հատկապես Մինաս Բժշկյանի գործը, ուր վանքը հիշվում է իր այս երեք անվանումներով. «Սուրբ Խաչկատար կամ Հաճկատար է վանք հայոց փոքր ինչ հեռի ի քաղաքէն, յարեւելեան կողմն շինեալ ի վերայ բլրոյ, որ յառաջագոյն անուանէր Խնդրակատար Սուրբ Աստուածածին»[34]: Հաճկատարում գտնվող մի շարք սրբանկարների վրա, որոնք կատարվել են ԺԹ. դարի առաջին կեսին եւ այժմ էլ կախված են այնտեղ, այս վանքն անվանվում է Խաչկատար: Այս սրբանկարները վանքին են նվիրել ուխտավորները, ուստի կարելի է ենթադրել, որ Հաճկատարն անգամ ԺԹ. դարում հայտնի է եղել նաեւ Խաչկատար անվամբ, ինչպես որ այս մակագրություններում է ասվում. «Ի դուռն Խաչկատար Սուրբ Աստուածածնին»:

1882 թ. այստեղ այցելած արեւմտահայ մտավորական Գաբրիել Էզաճյանը համանման ձեւով գրել է. «Թերեւս պարտ է լինիլ Խաչկատար»:

Վանքը երկու մուտք ունի՝ մեկը ընդհանուր դարպասը, որից ներս գտնվում է նաեւ ուխտավորների կացարանը, իսկ երկրորդ մուտքը տանում է դեպի ուխտավորական բլուրը, որը բարձրանում են ծնկաչոք: Ուխտավորական այս ճանապարհը խնդրակատար եւ հաճկատար ճանապարհն է[35], որի սկզբին մի սալ քար է դրված,

31 Տե՛ս **Ս. Գօլանճեան**, նշվ. աշխ., էջ 184:

32 Անդ, էջ 203:

33 **Ն. Ճ. Սիրունի**, նշվ. աշխ., էջ 107:

34 **Մինաս Բժշկեան**, նշվ. աշխ., էջ 192:

35 Տե՛ս «Հայերեն ձեռագրերի ԺԷ. դարի հիշատակարաններ», (1621-1640 թթ.), հտ. Բ., կազմեցին Վ. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան, Երեւան, 1978, էջ 361:

եւ այնտեղից ճանապարհը կանաչ մի արահետով տանում է վեր: Ճանապարհի սկզբնակետին գետնին դրված է Հաճկատարի եկեղեցու թիթեղյա մանրակերտը, որի ներսում ուխտավորները վառում են իրենց մոմերը, որոնք որպես բարեխոսություն են վառվում նրանց ճանապարհին: Դեպի վանքի պարիսպը տանող ճանապարհին կան մի քանի փոքր թմբեր, որտեղ դարձյալ մոմեր են վառվում: Ուխտավորները ծնկաչոք այսպես ելնում են, երկու անգամ պտտվում վանքի շուրջը եւ մտնում եկեղեցի: Պարսպից ներս՝ մուտքի մոտ հայկական ոճավորմամբ մի խաչքար է, որի մոտ եւ ուխտավորները մոմեր են վառում:

Եկեղեցու ավանդատան կողմից բացված դռներից մեկը, որն այժմ փակ է հին մետաղյա նիգով, կրում է ուխտավորների՝ տարբեր տարիներին կատարած մակագրությունները՝ բարեխոսական տարբեր խնդրանքներով:

Հաճկատարը ժամանակին եղել է կուսանաց անապատ, իսկ Զամկան՝ տղամարդկանց մենաստան. Հաճկատարի բակում գտնվում են մի քանի միանձնուհիների շիրիմներ, որոնց շուրջը եւս ուխտագնացությունների օրերին մոմեր են վառում, իսկ տապանաքարերը պատում են մետաղադրամներով: 1693 թ. առաջ լատիներեն մի վավերագրում ասվում է. «Սուչավայի հարաւային կողմը, քառորդ մղոն հեռու, կայ հայ կուսանոց մը, ուր խաղաղութեան ժամանակ կապրին 40 կոյսեր կամ այրիներ այս կուսաստանի եկամտով: Ամենքը կապրին ըստ հին սովորութեանց՝ առանց պարտաւորիչ կանոն կամ իրական ուխտ ունենալու, բայց ամենայն ջերմեռանդութեամբ եւ համեստութեամբ»[36]:

Եկեղեցու մուտքի դռանը ռումիներեն գրված է Hajigadar [Հաճկատար]: Համանման ձեւով ռումինական վավերագրերում Հաճկատարն անվանվել է Միտուկոյ Արմենեակ՝ Հայոց վանք:

Եկեղեցու ներսում գտնվում են մի շարք սրբանկարներ, որոնք ԺԸ.-ԺԹ. դարերից են եւ ներկայացնում են Բարեխոսության ու Տիրամայրը մանկան հետ թեմաները:

Եկեղեցու գավիթը ավելի ուշ է կառուցվել. երբ գավթից ներս ես մտնում եկեղեցու հին դռնով, թվում է, թե վիմափոր մի այր ես մտնում: Եկեղեցին կառուցված է բլրի գագաթին: Ըստ հայկական ընդունված կանոնի՝ բեմի դիմաց՝ աջ եւ ձախ կողմերում Հայոց աշխարհի առաջին երկու լուսավորիչների՝ Ս. Թադեոս եւ Ս. Բարդուղիմեոս առաքյալների պատկերներն են:

Եկեղեցու բեմի դիմաց գտնվող երկու գլխավոր հիմնասյուներն իրար կապող կամարի որմնանկարին պատկերված է Տրդատ թագավորի մկրտությունը: Սուչավայում այս պատկերը ներկայացնում է կաթոլիկ, ուղղափառ եւ հայկական ավանդույթների միախառնումը, ուր պատկերված է հայոց Տրդատ արքան՝ միջնադարյան ասպետների ու խաչակիրների հանդերձներով: Նրա սաղավարտը պահել են հին հռոմեացի լեգեոներների հիշեցնող զինվորները: Տրդատ թա-

36 **Schmidt**, Suczawas historische Denkwurdigkeiten, Czernowits, 1876, p. 192-193. լատիներեն բնագրի թարգմանությունը տե՛ս **Դ. Տան**, Արեւելեան հայք ի Դուքալինա, էջ 38:

գավորը պատկերված է արքայական ընտանիքի եւ հայոց ավագանու հետ միասին: Քիչ հեռվում արքայական նժույգներն են՝ կենդանիորեն ծառս եղած:

Կամարի աջ եւ ձախ կողմերում Քրիստոսի անձեռակերտ պատկերն է՝ փշե պսակով: Այն թեեւ ուղղափառ աշխարհի եկեղեցական պատկերների մասն է, այս շարակարգում, սակայն, ստուգաբանվում է նաեւ ազգային շրջանակում՝ կազմելով թեմատիկմիերրորդությունՍ.Թադեոսու Ս.Բարդուղիմեոսառաքյալներիեւ Տրդատի մկրտության պատկերների հետ՝ ներկայացնելով Հայոց աշխարհի լուսավորիչներին, Աբգար թագավորի հավատքը եւ Տրդատի դարձը՝Հայաստանում քրիստոնեության առաքելական քարոզչությունից մինչեւ պետականորեն ընդունումը: Պետք է նշել, որ Հաճկատարի եւ թե ընդհանրապես Սուչավայի վանքերի ու եկեղեցիների սրբանկարները եւ եկեղեցական սպասքը, համաձայն ջերմեռանդ մակագրությունների՝ նվիրել են վանք եկած ուխտավորները. այս մասին Լ. Բաբայանը գրում է. «Վանքն ունի բաւական հարստութիւններ, որ նուիրել են նրան զանազան ժամանակներում ուխտաւոր հիւանդները»[37]:

Հաճկատարի նշանակալից սրբություններից է 1244 թ. թվագրվող եւ Տաթեւում պատրաստված զանգը, որ հիմա մի տաղավարի ներքո կախված է վանքի բակում: Զանգի վրայի արձանագրությունն ասում է. «Յիշատակ է կեղղաթացի Առաքելի որդի Սիմէոնի Սուրբ Դադեւու վանաց: Թուականի ՌՄՂԳ՝ 1244 թ. մարտ ամսոյ 5-ին»: Հայտնի չէ, թե այս զանգը ինչպես է հայտնվել Հաճկատարում: Գալփագյանը այդ մասին գրում է, թե Ս. Սիմեոն եկեղեցու տարածքում «գերեզման մը փորելու պահուն գտնուեր է զանգակ մը հետեւեալ արձանագրութեամբ», եւ բերում է հիշյալ արձանագրությունը: Ս. Սիմեոն եկեղեցին հռչակված է նաեւ իր նշանավոր զանգակատնով, որը, ինչպես արդեն ասացինք, անվանվում էր Կարմիր աշտարակ: Այստեղ էր նաեւ Սուչավայի հայկական գերեզմանոցը: Ուստի կարելի է ենթադրել, որ այս զանգը, որպես Սյունյաց աշխարհից բերված նվիրական մի մասունք, նախատեսված է եղել այս աշտարակի համար, գտնվել է եկեղեցու տարածքում եւ վերստին ի հայտ է եկել այնտեղ գերեզման փորելիս, երբ այս տարածքը դարձել է քաղաքի հայկական գերեզմանոցը[38]:

Անհրաժեշտ է նշել, որ Հաճկատարը հրաշագործ է համարվել եւ համարվում ոչ միայն հայերի, այլեւ ռումինացիների եւ շրջակա մյուս բնակավայրերի քրիստոնյաների համար: Այսպես՝Ա. Ալթունյանը 1877 թ. գրում է. «Ունի ուխտաւորաց սենեակներ, խիստ անոյշ ջուր մը, որոյ նմանը չկայ քաղաքին մէջ: Այս վանքը հրաշագործ ըլլալու համբաւ մը կը վայելէ, ուր ոչ միայն հայերը, այլեւ օտարազգիք ալ կգան բժշկութիւն գտնելու»[39]:

37 **Լ. Բաբայան**, Հայերը Մոլդավայում եւ Բուկովինայում, Թիֆլիս, 1911, էջ 177:

38 Տե՛ս **Ն. Գալփագյան**, Ռումինահայ գաղութը, էջ 53:

39 **Ա. Ալթունեան**, Տեղագրութիւն հայոց գաղթականութեան ի Մոլտո-Վալաքիա, Հունգարիոյ եւ Լեհաստանու, Ֆոքշան, 1877, էջ 114: